Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանի ուղերձը ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի հիմնադրման 10-ամյակի առթիվ

Հարգելի ուսանողներ, աշխատակիցներ

Շնորհավորում եմ ձեզ մասնաճյուղի հիմնադրման 10-ամյա հոբելյանի առիթով: Դուք եղել եք Վայոց ձորի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր օղակներից մեկը կրթության և գիտության համակարգում և պատվով եք իրականացրել ձեր պարտականությունները: Մեր հանրապետության տարածքային զարգացման քաղաքականության համատեքստում մարզերում գործող բուհերի դերակատարումն ունի էական առանձնահատկություն այն պատճառով, որ բարձրագույն կրթությունը դարձնում է հասանելի տեղական մակարդակներում: Այս առումով Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղն ունի կարևոր առաքելություն և պետք է ապահովի տարածաշրջանի ազգաբնակչության ակնկալիքները: Հետևաբար տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև գործարար հանրույթի հետ փոխհարաբերությունների հաստատումը, ինչին ուղղված քայլեր այս ընթացքում բազմիցս են իրականացվել, այսօրվա հրամայականն է:

Անցած տասը տարիների ընթացքում մասնաճյուղում իրականացվել է մեծածավալ աշխատանք, որն ուղղված է եղել կրթության

որակի բարձրացմանը, հետազոտական ներուժի ձևավորմանը, հասարակության հետ ինտեգրմանը և միջազգայնացմանը: Հարկ է նշել, որ բոլոր գործընթացների հիմքում եղել են համայնքային ու տարածքային խնդիրների լուծմանը, ինչպես նաև բնակչության սոցիալական բեռի թեթևացմանը նպաստող քայլեր:

Մեկ անգամ ևս շնորհավորելով մասնաճյուղի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ՝ մաղթում եմ արգասաբեր աշխատանք և հաջողություններ կրթության ու գիտության ոլորտում:

Հարգանքով՝

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ

ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր